էլ բխում է, որ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը «Ագաստ» ՍՊ ընկերության նյութաիրավական պահանջով չի հանդիսանում հակադիր շահերով օժտված կողմ:

Վերը շարադրվածի արդյունքում դատարանը գալիս է եզրահանգման, այն մասին, որ պատասխանողի կողմից ապացուցվել է վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերը, հետևաբար նման պայմաններում հայցը ենթակա է մերժման:

-

6. Դատական ծախսերը.

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Նկատի ունենալով, որ հայցվորը հայցադիմումը դատարան ներկայացնելիս վճարել է օրենքով նախատեսված պետական տուրքի գումարը ինչպես նաև ներկայացրել է իր ներկայացուցիչ Լևոն Օհանյանի հետ փաստաբանական ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր կնքած լինելու մասին ապացույց՝ 17.06.2024 թվականի թիվ 1706/24 պայմանագիրը, սակայն հայցը մերժման ենթակա լինելու պարագայում Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ագաստ» ՍՊ ընկերության ընդդեմ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ աշխատողների ԱՐՀԿ-ի՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ աշխատողների ԱՐՀԿ-ի «Ագաստ» ՍՊ ընկերության միջև 16.01.2024 թվականին կնքված թիվ «ՍՄԿԲԿ ԳՀԱՊՁԲ-24/03.09» ծածկագրով

պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Աննա Ճիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am